ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
1994 ԹՎԱԿԱՆԻՆ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Եկեղեցաշինական. - Գերաշնորհ Տ. Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանի հովանավորությամբ և աջակցությամբ վերանորոգվեց Գորիսի Վերին Շենի Ս. Նորակնունք եկեղեցին: Օծումը կատարեց Հովնան Սրբազանը՝ 1994 թվականի Օգոստոսի 28-ին:

Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանի որոշումով 17.000 (տասնյոթ հազար) ամերիկյան դոլլարի աշխատանքներ կատարվեցին Տաթևում և ավարտվեցին Ս. Պետրոս Պողոս եկեղեցու ծածկասալերը: Հատկացված է ևս 1.060 (մեկ հազար վաթսուն) դոլլար՝ նույն եկեղեցու սեղանի նախապատրաստական աշխատանքների համար:

Ավարտվեց Եղեգնաձորի Նորավանքի Բուրթելաշեն Ս. Աստվածածին եկեղեցու ժամանակավոր տանիքը: Տ. Հովնան Արքեպիսկոպոս Տերտերյանի հովանավորությամբ սկսվել է և շուտով կավարտվի Սիսիանի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու սեղանի շինարարությունը:

Գերաշնորհ Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Ներսիսյանի հետ նախնական համաձայնությունից հետո սկսվել է Եղեգնաձորի Ս. Աստվածածին եկեղեցու սեղանի շինարարությունը:

Գորիսի տեղական ուժերի հետ համագործակցված ընթանում են Գորիսի Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի, ծածկասալերի, սեղանի և ներսի աշխատանքները:

Ավարտվեցին Վայքի Մարտիրոս գյուղի Ս. Հակոբ եկեղեցու վերանորոգման աշխատանքները:

Հիմնովին վերանորոգվեց և որմնանկարներով զարդարվեց Ղափանի Գեղանուշ գյուղի եկեղեցին:

Ընթացքի մեջ է Մեղրիի փոքր թաղի Ս. Աստվածածին եկեղեցու վերականգնումը:

1995 թ. Փետրվարի 18-ի հրամանագրով Սյունյաց թեմին վերադարձվեց Եղեգնաձորի Նորավանքը և Ս. Փոկաս մատուռը՝ իրենց շրջակա տարածքներով:

Շինարարական. - Նյու Յորքից Օրիորդ Անուշ Մաթևոսյանի բարերարությամբ ավարտվեց Սյունյաց թեմին հատկացված՝ զոհված ազատամարտիկների երեխաների Եղեգնաձորի նամբարի առաջին մասնաշենքը: Այս տարի կկառուցվեն երկրորդ և երրորդ մասնաշենքերը:

Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամյանի հովանավորությամբ ավարտվեց Գորիսում Սյունյաց առաջնորդարանի եռահարկ շենքի նորոգությունը, և գնվեց մեկ մեքենա՝ առաջնորդարանի համար:

Տեղապահ Սրբազան Հոր համաձայնությամբ և Խաժակ սրբազանի հովանավորությամբ սկսվել է Սյունյաց թեմի երկու/մեգավատ հզորությամբ

digitised by A.R.A.R.@

հիդրոկայանի շինարարությունը: Արդեն ձեռք է բերվել 560.000 (հինգ հարյուր վաթսուն հազար) ամերիկյան դոլլար արժողությամբ անհրաժեշտ խողովակաշարը, իսկ ՀՀ Կառավարության կողմից տրվել է արտոնագիր (լեցենզիա):

Քրիստոնեական դաստիարակություն և կրթություն. - Գորիսում և Սիսիանում գործում են Կիրակնօրյա դպրոցներ՝ 2000 (երկու հազար) աշակերտներով:

Ղափանում, Գորիսում, Սիսիանում և Եղեգնաձորում կազմակերպվել են եկեղեցական երգչախմբեր:

Սիսիանում կազմակերպված է ամենշաբաթյա կրոնական ռադիո ժամ:

Գորիսի "Զանգեզուր" թերթը պարբերաբար տպագրում է առաջնորդարանի կողմից պատրաստված կրոնական հոդվածներ:

Առաջնորդարանը հովանավորում է "Տաթև" թերթի հրատարակությունը, ուր տպվում են պատմաբանասիրական և կրոնական հոդվածներ:

Պարբերաբար լինում են հեռուստատեսային հաղորդումներ, հարցազրույցներ և այլն՝ տեղական հեռուստատեսությամբ:

Թեմի հոգևորականները ակտիվորեն մասնակցում են տարածքում կազմակերպվող բոլոր միջոցառումներին:

Թեմում գործում են 14 եկեղեցիներ:

Եկեղեցիների մեծ մասին կից կան կալվածքներ, ընդհանուր՝ 200 հեկտար տարածությամբ: Միայն Նորավանքի և Ճամբարի մոտ վերցված է 160 հեկտար:

Բարեգործական. - Թեմը սերտ համագործակցության մեջ է Հայ Օգնության Ֆոնդի (ՀՕՖ) գրասենյակի հետ: Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամյանի կարգադրությամբ բացվել է ՀՕՖ-ի Սյունիքի բաժանմունքը, որը Սյունիքի առաջնորդարանի միջոցով օգնում է տարածքի բնակչությանը: Բացվել է բարեգործական ճաշարան Գորիսում, ընթացքի մեջ է Եղեգնաձորի, Վայքի և Սիսիանի բարեգործական ճաշարանների շինարարությունները:

Տ. Աբրահամ Վարդապետ Մկրտչյան
Առաջնորդական Տեղապահ Սյունյաց Թեմի

digitised by A.R.A.R.@